

Ինչո՞ւ միտքէն չ'անցըններ, որ այդ որակումները արդարացնող մարդեր կրնան կենալ ու կան բոլոր ժողովուրդներուն մէջն ալ, առանց որ թուրք արիւն մը ըլլար անհրաժեշտ սա առաքինութիւնները սնուցանելու միտքերու դրութեան մը մէջ: Խորհած ունի՞, թէ բացի արիւն կեանքի հիսապայրենի ժողովուրդներէ ուրիշ ոչ մէկ մարդկային համախմբութեան մէջ -դրէք անունը ազգ- հանդիպելի կրնան ըլլալ մարդկութիւնը հիմնովին հերքող ամենավայրագ հանդէսները արեան ու կրակի, զորս պատմութիւնը արձանագրած է իբրեւ ջարդ: Ու հարցը, զայն ընելը, անոր ծարաւովը ապրիլը, անոր մէջ երիտասարդանալը թուրքերուն ազնիւ ու վեհանձն ալ մենաշնորհն է մեր օրերուն անգամ, ո՛ւր մնաց քանի մը դար առաջ: 914ի պատերազմին, փրոփականտի արդիւնք թուրք եւ գերման բարեկամութեան քաղաքական հաշիւները ի՛նչ դիւրութեամբ կը միջամտեն, որպէսզի անխոնջ տասը դար կործանելէ զատ ուրիշ ոչինչ իրագործող ժողովուրդ մը յայտարարուի Si noble, si généreux: Այդ այնքան ազնիւ ու վեհանձն թուրքերը ես ապրեի եմ սակայն, դարձեալ մեր գեղերու պարունակին: Մարդեր էին, որոնք իրենց հալալին հարամը խառնելու կը զգուշանային: Կը վախնային վաշխէն: Կը հասնէին մեր տագնապներուն՝ եղ, ցորեն, անուշ տրամադրելով չունեցողներուն, կեավուրն ալ ասոնց մէջ: Ատիկա իրականութիւն է ու ես թերեւս ըլլամ խօսած այս հոգեկան վիճակին վրայ: Բայց ահա աւելին: Սովի տարիներուն -ամէն տասը տարին անգամ մը սով էր մեր շրջաններուն- այդ կեավուր գեղէն հաճի Արթինը (տեսնել «Մնացորդաց»ը, Ա. հատոր, «Արգանդի ֆամբուլ») բացած է իր ամբարները բոլոր աղքատներուն, չունեցողներուն, հայ՝ որքան թուրք, որոնք կրած են անոնց պարունակութիւնը ու օրհնած մեծ չորպանին: Ազնուութեան եւ վեհանձնութեան օրինակները մի՛ մենաշնորհէք աս ու ան ցեղին: Ու մա՛նաւանդ զբօսաշրջիկի ձեր հոգեվիճակը, ձեզի մատուցուած հիւրասիրական ցոյցերը, աղջիկը, կնիկը, բերքը, բարիքը